

**ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ**

**Յ. Յ. ԱՂԱԽԱՆՅԱՆ**

Հայ իրականության մեջ ծանրակշիռ ուսումնասիրություններ ու աղբյուրագիտական հրատարակություններ կան հայ վաճառականության գործունեության, մասնավորապես առևտրի պատմության վերաբերյալ<sup>1</sup>: Սակայն հայ և համաշխարհային պատմության մեջ ունեցած նշանակության տեսանկյունից հայ վաճառականության գործունեությունը դեռևս ըստ արժանավույն չի գնահատված<sup>2</sup>: Ավելին, նույնիսկ քամահրվել է այդ դասի գործունեությունն ու նրա խաղացած դերը: Դրա լավագույն արտահայտությունը խորհրդային ժամանակաշրջանում և անգամ ԽՍՀՄ-ի կազմավորումից տասնամյակներ առաջ լույս տեսած գրականության մեջ հայ վաճառականների վերաբերյալ արտահայտված տեսակետներն ու մոտեցումներն են: Այսպես, օրինակ, Գ. Ջարբհանալյանը հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտին համարում է վաճառական ու եզրակացնում, որ առևտրական Հակոբի նպատակը գրքերի վաճառքից նյութական շահ ստանալն է եղել: Ըստ Ջարբհանալյանի՝ այդ էր պատճառը, որ նա տպագրում էր այնպիսի գրքեր, որոնք բովանդակում էին ժողովրդական բժշկության ու աստղագուշակության մասին լայն տարածում գտած պատկերացումներ<sup>3</sup>: Այս

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, **Լեո**, Խոջայական կապիտալը յեվ նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Եր., 1934, **Լ. Ս. Խաչիկյան**, Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա, «Բանբեր Սատենադարանի», հ. 13, Եր., 1980, «Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը», աշխ.՝ Լ. Ս. Խաչիկյանի և Հ. Բ. Փափագյանի, Եր., 1984, **Շ. Լ. Խաչիկյան**, Նոր Ջուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դարերում, Եր., 1988, «Շահվելու որդի Սարիադի հաշվեմատյանը», աշխ.՝ Շ. Լ. Խաչիկյանի, Եր., 1994, **Վ. Բայբուրդեան**, Համաշխարհային առևտուրը եւ իրանահայությունը 17-րդ դարում, Թեհրան, 1996, «Լազարեան առևտրական ընկերության հաշուեմատեանը, 1741-1759 թթ.», Տնտեսական պատմության վավերագրեր, Գ, աշխ.՝ Շ. Լ. Խաչիկյանի, Եր., 2006, **Փ. Բրոդել**, Материальная цивилизация, экономика и капитализм, XV-XVIII вв., т. 2, пер. с. французского Ю. Н. Афанасева, М., 2006 և այլն:

<sup>2</sup> Հայ վաճառականության գործունեության վերագնահատության տեսանկյունից հատկանշական են Հր. Գ. Միրզոյանի կատարած հարցադրումները, տե՛ս, օրինակ, **Հր. Գ. Միրզոյան**, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Եր., 1983, **Նույնի**՝ Հովհաննես Միրզոյ Ջուղայեցի, Եր., 2001:

<sup>3</sup> Այդ մասին տե՛ս **Գ. Ջարբհանալյան**, Պատմութիւն հայկական տպագրութեան, Վենետիկ, 1886, էջ 26:

միտքն իր շարունակությունն է գտնում Գ. Լևոնյանի աշխատանքում. «Հայ առևտրականի աչքից չէր կարող վրիպել գրքից, այդ նոր տեսակի ապրանքից սպասվելիք օգուտը: Ահա անշուշտ այդ առևտրականներից մեկը՝ Հակոբ անունով, միտք է հղանում տպագրել հայերեն գրքեր»<sup>4</sup>, որի նպատակը «ազգը լուսավորելու, կամ տպագրության գյուտից օգտվելով հայ ժողովրդին ծառայելու փափագը չի եղել»<sup>5</sup>: Նա, մարդկանց սնահավատությունը չարաշահելով, գուշակությունների ու կախարդանքների մասին գրքեր է հրատարակել՝ դրան աշխատելու միտումով: Մեղապարտին «իր օգտի համար մտածող չարաշահ առևտրականի»<sup>6</sup> պիտակից ազատում է Ռ. Իշխանյանը: Նա մտացածին է համարում թե՛ գրատպության՝ իբրև եկամտի նոր միջոց դիտելու հանգամանքը և թե՛ Հակոբ Մեղապարտի վաճառական լինելը: Հասկանալի է, որ Գ. Ջարբեհանալյանի և Գ. Լևոնյանի այդպիսի բացասական գնահատականը վերաբերում էր ոչ թե Հակոբ Մեղապարտի անձին, այլ վաճառականությանն առհասարակ:

Իսկ Աշ. Հովհաննիսյանը հայ վաճառականի գործունեության մեջ ոչ միայն որևէ դրական գիծ չի տեսնում, այլև անգամ անարգանքի սյունին է գամում նրանց՝ գրելով, թե «քաղքենի արտոնված մի դաս էր այդ, որի հասարակական մորալը որոշվում էր համրիչի ցուցանիշներով, մարդիկ, որոնք գլուխ խոնարհելով տիրողների առաջ, ջանում էին ճանապարհի հարթել դեպի իրենց բարեկեցությունը, անտարբեր դեպի ուրիշների չարքաշ ու նեղ օրը: Այս կարգի առևտրականները հիմք ունեին խուսափելու հատկապես ազգային քաղաքականության ստորջրյա ժայռերից և պահանջված դեպքում փողի օգնությամբ նվաճել անձնական հարստություն»<sup>7</sup>: «Համրիչի ցուցանիշներով» որոշվող բարոյականությամբ օժտելով հայ վաճառականներին՝ Աշ. Հովհաննիսյանը, փաստորեն, նրանց ներկայացնում է իբրև շահամոլ, ապագային ու ապաքաղաքական մի դաս, որը միայն անձնական շահ է հետապնդել:

Իհարկե, չպետք է մոռանալ, որ նման բնութագրումները նաև ժամանակի մտայնությանը տուրք տալու արդյունք էին: Հայ վաճառականության հանդեպ այսպիսի չարդարացված վերաբերմունքը հերքելու համար փորձենք ներկայացնել հայ վաճառականության գործունեությունը հատկապես հայալեզու տպարանների հիմնադրման և հայ գրքի տպագրության զարգացման գործում նրանց ունեցած դերի տեսանկյունից:

Այսպես, «մարդ գրչական արվեստին»<sup>8</sup> փոխարինելու եկած տպագրության գյուտին արձագանքում են ժամանակի գրեթե բոլոր քաղաքակիրթ ազգերը, այդ թվում և հայերը: 1512 թ. Հակոբ Մեղապարտի ջանքերով Հայաստանից շատ հեռու՝ Վենետիկում, հիմնվում է առաջին հայալեզու տպարանը: Վենետիկից բացի՝ հայկական տպարաններ են հիմնվել նաև Ամստերդամում, Մարսելում և եվրոպական մի շարք այլ կարևորագույն

<sup>4</sup> Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 39:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 56:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Գ. 2, Եր., 1959, էջ 458:

<sup>8</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Եր., 1972, էջ 436:

կենտրոններում: Հայկական տպարան բացելու փորձ է կատարվել նաև Նոր Ջուղայում: Խաչատուր Կեսարացու ջանքերով Ամենափրկիչ վանքին կից հիմնվում է տնայնագործական եղանակներով աշխատող առաջին հաստոցը: Ի դեպ, Կեսարացին տպարանը հիմնում է առանց եվրոպական տպագրական մեքենաների հետ ծանոթ լինելու, այդ պատճառով էլ Ռ. Իշխանյանն այն անվանում է «տպագրության հայկական գյուտ»<sup>9</sup>: Հայատառ տպարաններում լույս է տեսնում ավելի քան հազար անուն գիրք բազմահազար տպաքանակով, որոնք էլ մեծապես նպաստում են մտավոր ժառանգության պահպանմանը, գրականության ու գիտական մտքի նվաճումների տարածմանը: Բայց տպարանների աշխատանքը կյանքի կոչելու համար նյութական բավականին մեծ միջոցներ էին անհրաժեշտ: Եվ քանի որ չկար պետություն ու պետական հովանավորություն, այդ գործառույթն իր վրա պետք է վերցներ հայ հասարակության նյութապես առավել ապահով դասը: Իսկ դա հայ վաճառականությունն էր, որի աշխարհասփյուռ գործունեությունը հատկապես 16-րդ դարից սկսած վերելք էր ապրում:

Իսկ ի՞նչն էր դրդում բազմազան ապրանքների առուծախի գործընթացների մեջ մտած ու դրանից խոշոր եկամուտներ ստացող վաճառականներին հովանավորել հայալեզու տպագրության գործը: Այս հարցին պատասխանելու համար, հայոց տպարանների ստեղծման պատմությանը վերաբերող գրականությունից օգտվելով<sup>10</sup>, ներկայացնենք 17-րդ, 18-րդ և 19-րդ դարերի մի քանի վաճառական-տպարանատերերի գործունեությունը:

Ժամանակագրական առումով որպես տպարանատեր հիշատակվող առաջին հայ վաճառականը 17-րդ դարում ապրած Ավետիս Գլիճենցն է: Առևտրական գործերով լինելով Ամստերդամում՝ Ավետիսը տեղեկանում է տեղի հայկական տպարանի կուտակած պարտքերի մասին և հանդիպում մահվան մահճում գտնվող Մատթեոս Ծարեցուն, որը Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի հանձնարարությամբ Աստվածաշունչ տպագրելու նպատակով մեկնել էր Եվրոպա: Բազմաթիվ փորձություններ հաղթահարելով՝ նրան հաջողվել էր տպարան հիմնել Ամստերդամում և սկսել հայալեզու երկու գրքերի տպագրության գործը: Բայց քանի որ Էջմիածնից չէր ստացել համապատասխան նյութական միջոցներ, Ծարեցին բավականաչափ պարտքեր էր կուտակել՝ հույս ունենալով, որ գրքերի վաճառքից ստացված դրամով կկարողանա մարել դրանք: Գրքերը դեռևս չէին տպագրվել, իսկ պարտատերերը պահաջում էին իրենց գումարները: Մատթեոս Ծարեցին Ավետիս Գլիճենցին առաջարկում է օգնել՝ փոխարենը խոստանալով տպագրվելիք գրքերից ստացված շահույթը բաժանել հավասարապես, իսկ իր մահվանից հետո տպարանը փոխանցել նրան: Ավետիսը համաձայնում է վճարել ողջ պարտքը, բայց ոչ այն պատճառով, որ ակնկալում էր տպագրվելիք գրքերի վաճառքից ու առհասարակ հետագայում տպարանից սպասվելիք եկամուտը: Երկուստեք քաջ գիտակցում էին, որ տպարանը եկամուտ չէր բերելու:

<sup>9</sup> Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, հ. 1, Եր., 1977, էջ 356:

<sup>10</sup> Տե՛ս Գ. Լևոնյան, նշվ. աշխ., Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, հ. 1, Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Մավալյան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Եր., 1988:

Ավետիսի միակ պայմանն այն էր, որ պարտքերից ազատված տպարանն այդուհետ կոչվեր Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի անվամբ, իսկ տպագրությունից ստացված գումարները նվիրաբերվեին Էջմիածնին և Ս. Սարգիս եկեղեցուն<sup>11</sup>: Այդպես էլ լինում է, և «այսպես պահպանվում է Ամստերդամում Մատթեոս Ծարեցու գոհողություններով և նահատակությամբ երևան եկած տպարանը, որ մերոպատառ գրքի բազմացման մեծ առաքելություն ուներ»<sup>12</sup>: Պարտքերից ազատված տպարանը սկզբնական շրջանում, ինչպես կարդում ենք 1661թ. լույս տեսած «Յիսուս Որդի» գրքի հիշատակարանում, երկու ամիս շարունակ դադարեցնում է աշխատանքները, «վասն այն որ սրբագրող ոչ գոյր բայց միայն ես ի կարդացող որ չի խիստ հեմուտ ժամանակ մի տարեկուսեալ և պարապ մընացի ես և սահմանք և գործքն և մըշակն բ ամիս ժամանակ անցաւ»<sup>13</sup>: Այլընտրանք չունենալով՝ Ավետիսը ձեռնամուխ է լինում սրբագրական ու տպագրական որոշ աշխատանքների անմիջական մասնակցությանը: Չնայած «խիստ հեմուտ» չէր այդ գործում, այնուամենայնիվ ջանք չի խնայում սկսածն ավարտին հասցնելու համար: Մոտենում էր առևտրական նավերի՝ Ջոյուռնիա վերադառնալու ժամանակը, որոնցով Ավետիսը եկել էր Ամստերդամ, իսկ գրքի տպագրության համար տարվող աշխատանքները դեռևս անավարտ էին: Վաճառականը չի լքում տպարանը: Բայց որքան էլ մեծ լիներ նրա նվիրումն ազգանպաստ այդ գործին, միայնակ ի գորու չէր ապահովվելու տպարանի հետագա աշխատանքը, իսկ տպարանի աշխատանքն այլևս ցանկալի չէր դադարեցնել, ուստի շտապ հեռագրում է եղբորը՝ Ոսկան Երևանցուն, որն այդ ժամանակ Ուշի գյուղի Ս. Սարգիս վանքի վանահայրն էր: Մինչ այդ Ոսկանն իր խելամտությամբ հասցրել էր արժանանալ Հակոբ Գ. Ջուղայեցի կաթողիկոսի համակրանքին, ինչն էլ առիթ է դառնում, որ նա Հոլանդիա մեկնելու թույլտվություն ստանա՝ իր հետ տանելով կաթողիկոսի կողմից հավանության արժանացած ձեռագիր Աստվածաշնչի մի ընտիր օրինակ: Աստվածաշնչի տպագրությունը նյութական շատ մեծ միջոցներ պահանջող ձեռնարկ էր, ուստի կաթողիկոսը հանձնարարում է Ոսկանին նախ մեկնել Լիվոռնոյի հայ գաղութ, որտեղ երեք հայ վաճառականներ՝ «Խանենց պարոն Ստեփանոսն, Քթեշենց պարոն Թեոդորոսն և Տէր Աւագենց պարոն Պետրոսը», հանձն են առնում հոգալ ամբողջ տպագրական ծախսերը այն պայմանով, որ «գավելեալ շահսն որ ի վաճառմանէ... տալ Էջմիածնի»<sup>14</sup>: Լիվոռնոյից Ոսկան Երևանցին մեկնում է Ամստերդամ ու անմիջապես ձեռնամուխ լինում տպագրության բարդ ու դժվարին աշխատանքին, ինչն էլ դառնում է հայ տպագրության գործի նոր ու կարևորագույն մի փուլի սկիզբը: Այս տպարանում հետագա տարիներին լույս են տեսնում բազմաթիվ ու բազմաբնույթ գրքեր՝ լուսավորելով հայ աշխարհիկ դասի միտքը, իսկ հայ հոգևոր դասին ապահովելով համապատասխան գրականությամբ: Հենց այս տպարանում է իրականություն դառնում հայ հոգևոր ու աշխարհիկ դա-

<sup>11</sup> Այդ մասին տես **Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավալյան**, նշվ. աշխ., էջ 39:

<sup>12</sup> **Ռ. Իշխանյան**, նշվ. աշխ., Եր., 1977, էջ 417:

<sup>13</sup> **Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավալյան**, նշվ. աշխ., էջ 36:

<sup>14</sup> «Հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության երեքհարյուրամյակը», «Էջմիածին», 1966, Գ, էջ 7:

սերի վաղեմի երազանքը. տպագրվում է Սուրբ գիրքը՝ Աստվածաշունչը<sup>15</sup>:

Հատկանշական է, որ հենց Ավետիսին հետաքրքրեց հոգեվարքի մեջ գտնվող տպարանի ճակատագիրը, մի վաճառականի, որի եղբայրը հոգևորական էր: Չէ՞ որ առևտրական գործերով Ջնյունիայից Ամստերդամ հասած նավում Ավետիսից բացի, համոզված կարող ենք լինել, ուրիշ հայ վաճառականներ էլ կային: Այս առումով հետաքրքրական է նախ այն, որ Ավետիս Դիճենցը համաձայնում է վճարել տպարանի կուտակած պարտքերը այն պարտադիր պայմանով, որ այն կոչվի Ս. Սարգսի եկեղեցու անունով, որի վանահայրն իր եղբայրն էր, և երկրորդ, եղբոր անունը Ավետիսն անխտիր նշում է իր տպագրած բոլոր գրքերի հիշատակարաններում՝ «ես էրևանցի դրլէջենց ոսկան վարդապետի եղբայր ատետիսս»<sup>16</sup>, «գկրտսեր եղբայր ոսկան վարդապետին»<sup>17</sup>, «գՏէր Ոսկանի Բաբունեացպետի գեղբայրն»<sup>18</sup>: Այս ամենից թերևս կարող ենք եզրակացնել, որ վաճառական Ավետիսի վրա գաղափարական մեծ ազդեցություն է ունեցել նրա եղբայրը՝ Ոսկանը, և որ երկու եղբայրների նպատակն էլ վերջին հաշվով նույնն է եղել. մեկը փորձում էր գրչով ու լուսավորականությամբ ծառայել հայոց ազգին, մյուսը՝ իր նյութական միջոցներով:

17-րդ դարի մյուս հայ վաճառականը, որը հիշատակվում է իբրև տպարանատեր, Սահրադի որդի խոջա Գասպարն է: Այս հարուստ առևտրականը տպագրական սարքեր է գնել, տպատառեր պատվիրել և իր վենետիկյան բնակարանում տպարան է հիմնել: Խոջա Գասպարի տպարանում 1686-1687թթ. լույս է տեսնում երեք գիրք՝ Դոմինիկոս Բոհուրսիի «Խոկունն քրիստոնեական», «Խորհրդատետր» և «Ճաշոց»: Վերջինիս տպագրությանը մասնակցել է նաև Թադեոս Համազասպանը, որը Ոսկան Երևանցու նախկին գործընկերն էր և խոջա Գասպարի տպարանում երկու տարի կատարել է սրբագրական և տպագրական որոշ աշխատանքներ: Գրքերի առաջաբաններից ու հիշատակարաններից տեղեկանում ենք ինչպես տպարանի հիմնադրման ու գրքերի տպագրության հետ կապված դժվարությունների, այնպես էլ այդ գործի նպատակի մասին: Այսպես, առաջին գրքի հիշատակարանում կարդում ենք. «Այժմ օգնութեամբ տեսա՞ն գսկիզբն արարաք ճաշոցին, որ թէ պէտ գործն իմն տաժանելի է և դժուարին մեզ գործավարացս բայց յոյժ վայելուչ ձեզ վայելողացո թէ ըստ ձևոյն և թէ ըստ ճոխութեանն: Չոր և հաւատամ թէ հաճելի լինելոց իցէ ի փառս քրիստոսի և ի պարծանս ազգին մերոյ և ի գովեստ սրբազան Հայրապետին տեսա՞ն Եղիազարու. և ի յիշատակ անջնջելի տանն Սահրատեան»<sup>19</sup>: Երկրորդ գրքի ծավալուն հիշատակարանում երախտիքի խոսք է ուղղվում մի շարք խոջաների, մասնավորապես խոջա Գասպարին, որի տպարանում և որի նյութական մեծ աջակցության շնորհիվ լույս է ընծայվում հայ հոգևորականության համար այնքան կարևոր «Ճաշոցը»: Երրորդ գրքից հիշատակարան մեզ չի հասել.

<sup>15</sup> Այդ մասին տե՛ս «Հայերեն Աստվածաշունչի առաջին տպագրության երեքհարյուրամյակը», «Էջմիածին», 1966, նոյեմբեր-դեկտեմբեր:

<sup>16</sup> Ե. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավալյան, նշվ. աշխ., էջ 36:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 38:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 39:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 96:

կա մի ծանուցում, ըստ որի գրքի պատվիրատուն խոջա Սահրադի որդի պարոն Մուրադն է: Ընդհանուր առմամբ Սահրադի որդի խոջա Գասպարի կողմից տպարան հիմնելու դժվարին գործին լծվելու նպատակը, փաստորեն, Սահրադյան տոհմից «ի յիշատակ անջնջելի» թողնելն էր և «ի պարծանս մերոյ ազգին» որևէ գործ անելը: Իսկ այդ նպատակն ի կատար ածելու համար հայ վաճառական-տպարանատերը ճիգ ու ջանք չի խնայել, որպեսզի ընթերցողների համար թե՛ գրքի ձևը և թե՛ բովանդակությունը հաճելի լինեն:

«Ի պարծանս մերոյ ազգին» որևէ գործ անելու տեսանկյունից ուշագրավ է հատկապես մեկ այլ վաճառականի՝ ագուլեցի խոջա Գուլնազարի որդի Նահապետի գործունեությունը: Առևտրի միջոցով կուտակած հարըստությունն ի սպաս դնելով՝ մեծագույն ջանքերի գնով նա 1687թ. Վենետիկում տպարան է հիմնում, որտեղ էլ տպագրվում է «Պարզաբանութիւն հոգեւնուագ Սաղմոսացն Դաւթի մարգարէին» գիրքը: Ի դեպ, սա աշխարհաբար երկրորդ գիրքն էր հայ իրականության մեջ: Գրքի թարգմանիչը 17-րդ դարի սկանավոր մտավորական գործիչ Հովհաննես Հովովն էր: Նա առաջաբանում նշում է, որ ագուլեցի խոջա Գուլնազարի որդի Նահապետը Կ. Պոլսում վաղուց իրեն խնդրել էր գրել Սաղմոսի մեկնություն: Տարիներ անց Նահապետը նույնը կրկնել էր Վենետիկում: «Ի վաղուցիտէտ ցանկանալով ագուլեցի խօճայ Գուլնազարի որդի խօճայ նահապետին մեկնութեանց սաղմոսացն դաւթի մարգարէին, խնդրեալ էր բազմիցս գնոյնն ի կոստանդինուպօլիս ի փարատումն տխրութեանց իւրոց. և ի սփոփանս հոգւոյ իւրոյ: Եվ ի չկարելն գտանել զպարզախօս ոմն հեղինակ, կամ զլիակատար իմն, ուխտեալ էր յանձին իւրում տալ շարադրել զնա երբեմն ի դիպակում ժամու ի լրումն ըղձի և դիտաւորութեան իւրոյ. Ուստի ի դառնալն իւր վերստին առողջութեամբ շնորհօք տեսառն ի քաղաքս այս Վենետիկ. թախանձանօք խընդրեաց ի հիքոյս պարզաբանել գնոյնն. Ոչ վասն մարմնաւոր օգտի և շահասիրութեան իւրոյ, այլ վասն հոգեկան մխիթարութեան ազգին հայկազունեաց. և ի յիշատակ անջնջելի ինքեան և ծնողաց իւրոյ հանգուցելոց ի քրիստոս: Բայց ոչ խրթին շարադրութեամբ, այլ աշխարհական լեզուաւ. ըստ որում տեսեալ էր առ իտալացիս. զի ամենեքեան միահաղոյն դիւրապէս հասկանալով, վայելիցեն գնոյնն»<sup>20</sup>: Ընդ որում, գրքի սկզբում և վերջում զետեղված ոտանավորներում Նահապետը կրկին ու կրկին հայտնում է, որ ինքն այդ քայլը կատարել է «յօգուտ հայոց ազգի», և իր ցանկությունն ու երազանքը ի կատար ածելու համար չի խնայել «զինչ պիտոյ էր», ուստի գրում է. «Բազում դրամ ըս վատնեցի. ինեղութեան ժամանակի. մինչև ըզ սա տպագրեցի. և ի վախճան իւր հասուցի»<sup>21</sup>:

Այստեղ առնվազն երկու հարց է ծագում. ի՞նչը կարող էր ստիպել Նահապետ Ագուլեցուն այդքան դժվարին ճանապարհով վաստակած նյութական միջոցներն այդպես շռայլորեն նվիրաբերել Սաղմոսի մեկնությունը բոլորին հասկանալի հայերենով տպագրելու գործին, և ինչո՞ւ էր ցանկանում հատկապես Հովովի թարգմանությունը հրատարակել: Մեծահարուստ խոջայի այս չարչարանքների ու նյութական միջոցների զոհողության նպատակը

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 105:

<sup>21</sup> Նույն տեղում:

հասկանալուն օգնում է գրքի բովանդակությունը: Բանն այն է, որ Սաղմոսը ողջ միջնադարում Աստվածաշնչի ամենատարածված գրքերից էր: Այն «հիբրև մարդկային խռովված հոգու բուռն տվայտանքների ու ալեբախումների փայլուն դրսևորում ընթերցողին լայն հնարավորություն էր տալիս արտահայտելու կյանքից ունեցած իր դժգոհությունն ու բողոքը, հուսախաբությունն ու հուսահատությունը, գալիքի հանդեպ տածած հույսն ու հավատը, իր հոգու խորքում փայփայած իղձերն ու երագանքները»<sup>22</sup>: Սաղմոսից հավասարապես օգտվում էին թե՛ հոգևորականները և թե՛ աշխարհականները: Ու բնավ պատահական չէ, որ այն տպագրվել է դեռևս հայ տպագրության արշալույսին և հետագայում էլ բազում հրատարակություններ է ունեցել: 1638-1682թթ. ընթացքում, օրինակ, Սաղմոսը լույս է տեսել ավելի քան տասն անգամ: Բայց այդքանից հետո էլ շատերը ստիպված են եղել տպագրից կատարել ձեռագիր ընդօրինակություն<sup>23</sup>: Իսկ թե ինչու է Նահապետը հատկապես ցանկանում տպագրված տեսնել հենց Հոլովի թարգմանությունը, այս հարցի պատասխանը տալիս է Հր. Ղ. Միրզոյանը<sup>24</sup>: Նա ներկայացնում է անհայտ մեկնիչի ու Հոլովի թարգմանությունից մի փոքրիկ հատվածի հետաքրքիր համեմատական վերլուծություն: Քանի որ Սաղմոսի բովանդակային ու համեմատական վերլուծությունը դուրս է մեր նպատակից, առանց համապատասխան տեքստերը ներկայացնելու նշենք միայն, որ Հովհաննես Հոլովի մոտ ակնհայտորեն երևում են սեփական մեկնությունները, հատկապես հայոց ազգի ողբերգական վիճակը բնութագրող հատվածների շեշտադրումը: Ահա թե ինչն է պատճառը, որ Նահապետն անպայման ցանկացել է հովանավորել հենց Հոլովի կատարած թարգմանությունը: Չէ՞ որ ընթերցողները «ամենեքեան միահաղոյն դիրապէս հասկանալ» կարող էին միայն այն, ինչը գրված էր ժողովրդին մատչելի լեզվով, և, որ հատկապես կարևոր է, այն վերաբերում էր իրենց հոգսերին և փորձում էր փարատել իրենց վշտերը: Ուստի որևէ պատճառ չունենք չհավատալու տպագրիչի անկեղծությանը, թե գիրքը կազմվել է «ոչ վասն մարմնատր օգտի և շահասիրութեան իւրոյ», այլ «վասն հոգեկան մխիթարութեան ազգին հայկազունեաց» և «յօգուտ հայոց ազգի»:

Փաստորեն, թե՛ Ավետիս Գլիճենցը, թե՛ խոջա Գասպարը, թե՛ խոջա Նահապետը տպարաններ էին հիմնել միևնույն վեհ նպատակով՝ ինչ-որ կերպ գորավիզ լինելու հայոց ազգին: Բայց եթե Ավետիս Գլիճենցի դեպքում չափազանց կարևոր էր Ոսկանի նման եղբայր ունենալու հանգամանքը, ինչը մեծ ազդեցություն էր ունեցել նրա գաղափարական կողմնորոշումների վրա, ապա Ավետիսի կողքին ունենք Նահապետի օրինակը, որը, համուն հայրենակիցների բարօրության, ողջ ունեցվածքը ներդրեց մեկ գրքի տպագրության համար: Այս իմաստով ուշագրավ է, որ Սաղմոսի թարգմանության և բազմաթիվ այլ թարգմանական ու ինքնուրույն գրքերի հեղինակ Հովհաննես Հոլովի անունը նույնիսկ չի հիշատակվում «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական հրատարակության էջերում, իսկ Նահապետ

<sup>22</sup> Հր. Ղ. Միրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, էջ 122:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 122:

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 123-124:

Ազուլեցու շքեղ նկարը, իբրև ազգանվեր ու ազգանպաստ իր գործի փոխհատուցում, զարդարում է նույն հրատարակության 4-րդ հատորի 617-րդ էջը:

Եթե 17-րդ դարում Ավետիս Գլիճենցը, խոջա Գասպարն ու Նահապետը Եվրոպայից էին փորձում հայ ազգին ինչ-որ կերպ գորավիզ լինել, ապա 18-րդ դարում նորջուղայեցի վաճառական Խոջամալի որդի Գրիգոր Խալդարյանցն այդ գործին ձեռնամուխ է լինում Ռուսաստանում: 1783 թ. Պետերբուրգում լույս տեսած «Ժամագրքի»<sup>25</sup> հիշատակարանից տեղեկանում ենք, որ Գրիգոր Խալդարյանցը վաղուց ի վեր փափագ է ունեցել «ստանալոյ գտիլս. և տպելոյ զգրեանս պիտանիս և օգտաւէտս. սակս հասարակութեան պատուելի ազգին իմոյ», ուստի «ելեալ յերկրէն հնդկաց գնացի յերկիրն Անգլիացոց և ի մեծ քաղաքն Լոնդոն, և մնացի անդ իբր ամս տասն. և ի միջոցի սոյն տասնեքի ամացս անդադար որոնէի գտանել զարհեստաւոր մի, զի փորագրեալ տայցէր ինձ գտառս հայկականս»: Երկար որոնումներից հետո նրան հաջողվում է գտնել մի փորագրիչ-վարպետի, որը հանձն է առնում Խալդարյանցի ուզած տառերը պատրաստել: Ի հատուցում վարպետի աշխատանքի՝ «գոր քան վարձս խնդրեաց, զայն ևս խոստացայ տալ անխնայօրէն», - ասում է Խալդարյանցը: 1780 թ. Լոնդոնում<sup>26</sup> տպագրում է «Դաւանութիւն հաւատոյ» գիրքը, ապա իր տառերը հետն առած՝ տեղափոխվում է Պետերբուրգ: Այստեղ հանդիպում է Ռուսաստանի Հայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի հետ, որը խրախուսում է նրան և խոստանում է ամեն կերպ աջակցել նրա ազգօգուտ գործին: Արքեպիսկոպոսի խորհրդով Խալդարյանցը նախ տպագրում է մի փոքրիկ այբբենարան՝ «ծախիք իմովք», 1782 թ. տպագրում է «Կրթութիւն Քրիստոնեականը», և նկատելով, որ իր տառերի տեսակները քիչ են, Լոնդոնից հրավիրում է իր ծանոթ փորագրիչ վարպետին և խոշոր տառեր պատրաստելու պատվեր տալիս: Կատարված անհրաժեշտ ծախսերի մասին գրում է. «Առ այս թէ որքան աշխատանս և ծախս արարք՝ այն ամենայն ստուգապէս փորձողացն է յայտ»: Արղությանի հանձնարարությամբ սեփական միջոցներով տպագրում է նաև «Ժամագիրքը», որի հիշատակարանից էլ հիմնականում տեղեկանում ենք հարուստ վաճառական, տպարանատեր ու տպագրիչ Գրիգոր Խալդարյանցի գործունեության մասին:

Հատկանշական է, որ «Ժամագրքի» տպագրությունից չորս տարի անց՝ 1787 թ., Խալդարյանցը տպագրում է մեկ այլ գիրք՝ «Կարճառօտ ժամագիրք» վերնագրով: Այս երկու գրքերի բովանդակությունների հպանցիկ համեմատությունից անգամ երևում են դրանցում առկա ծավալային, կառուցվածքային ու բովանդակային մի շարք տարբերություններ: «Կարճառօտ ժամագրքի» տպագրման նպատակը տիտղոսաբերթից արդեն հասկանալի է: Անհրաժեշտ էր օգնել հայ վաճառականությանը՝ պահպանելու ազգային ավանդույթները, նորմերն ու հոգևոր բարեպաշտական սովորույթները: Բայց քանի որ վաճառականի աստանդական կյանքի պայմաններում դա անելն այնքան էլ հեշտ չէր, ուստի Խալդարյանցը, որ քաջատեղյակ էր վաճառականի կենսաձևին ու մեծապես գիտակցում էր ազգային արժեքների

<sup>25</sup> Տե՛ս Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավալյան, նշվ. աշխ., էջ 547:

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 521:



պահպանման անհրաժեշտությունը, ձեռնամուխ է լինում ժամագրքի համառոտ, պարզեցված տարբերակի տպագրմանը:

Հետագա տարիներին էլ Խաղարյանցի նախաձեռնությամբ տպագրվում են այնպիսի գրքեր, որոնք կոչված էին բավարարելու ինչպես հայ վաճառականության հոգևոր պահանջները, այնպես էլ առհասարակ հայոց մեջ լուսավորականություն տարածելու նպատակ ունեին:

Հայաստանում լուսավորականության տարածման վեհ նպատակի նվիրյալներից մեկ ուրիշին էլ հանդիպում ենք կրկին Հայաստանից շատ հեռու, այս անգամ արդեն 19-րդ դարում և Հնդկաստանի Մադրաս քաղաքում: Խոսքը մեծահարուստ Սարգիս Ծատուր Աղավալյանի մասին է, որը օր ծերության հիմնում է երրորդ հայկական տպարանը: Չլինելով այդ գործի գիտակ՝ Աղավալյանը համագործակցում է հայ առաջին պարբերականի խմբագիր Հարություն Ծմավոնյանի հետ՝ նրան կարգելով տպարանի փաստական ղեկավար և կազմակերպիչ: Այս մասին տեղեկանում ենք նույն տպարանում լույս տեսած գրքերի առաջաբաններից, որտեղ ուշագրավ են տպարանի հիմնադրման նպատակին և տպագրության ենթակա գրքերի ընտրությանն առնչվող հատվածները: «Արդ՝ որովհետև միտք և դիտաւորութիւն շինողի գործարանիս միտեալ է միայն և եթ՝ ի լուսաւորութիւն և ի պայծառութիւն ազգիս մերոյ, վասն որոյ թողեալ է արձակ և ձրի տպարանս այս վասն ամենեցուն, զի ո՞վ որ և հաճեսցի տպեցուցանել գիրք ինչ, թէ մեծ՝ և թէ փոքր. միայն թէ չիցէ յայնս բան ընդդէմ սրբոյ եկեղեցւոյ, կամ պատույ և համբաւոյ ումեք, կարող է տպել յայսմ տպագրատան, գթութիւն և զվարճս գործաւորացն միայն վճարելով. և ևս առաւել՝ եթէ գիրքն այն իցէ արժանաւոր ինչ՝ որ կարիցէ նորագիտ իմաստ իմն ընծայել ազգի մերոյ, և տպագրողն չիցէ բաւական ի վեր ասացեալ ծախն հատուցանել, յայնժամ ասացեալ պարոն Սարգիս Ծատուր Աղավալեանն, ըստ արժանաւորութեան գործոյն օգնական է լինելոց ծախուցն»<sup>27</sup>: Այսպես, Աղավալյանի տպարանում գիրք տպագրելու հնարավորություն ուներ ցանկացած հեղինակ՝ վճարելով միայն թղթի ու գործավարների աշխատանքի համար: Իսկ եթե հեղինակն այդ ծախսերն իրականացնելու նյութական բավարար միջոցներ չունէր, բայց նրա գիրքը կարող էր ծառայել «ի հոգևոր վայելումն ամենայն հայկազեանս տոհմի», Աղավալյանը ստանձնում էր նաև այդ ծախսերի մի մասը:

Այսպիսով, օր ծերության ստանձնելով տպարանի հիմնադրման ու գրքերի տպագրության դժվարին ու սերունդների առջև այնքան պատասխանատու գործը՝ Ծատուր Աղավալյանը կարողացավ «գհարիքամեայ կորուսեալ անունն քաջիմաստ րաբունապետիս շարագրողի մատենիս անդրէն յաշխարհ վերանորոգել»<sup>28</sup> և դրանով հիմք ու խթան դառնալ հայոց մեջ լուսավորականության տարածման համար:

Վերը նշված օրինակները, բնականաբար, չեն սպառում 17-19-րդ դարերի հայ վաճառական-տպարանատերերի թիվը: Եվ քանի որ բոլորին առանձին-առանձին ու մանրակրկիտ ուսումնասիրելը դուրս է մեր նպատա-

<sup>27</sup> Մեջբերումն ըստ՝ **Հր. Ղ. Միրզոյան**, Հովհաննես Ջուղայեցու «Գիրք սրբագնագործութեան» երկի տպագրության շուրջ, «Բանբեր Երևանի Համալսարանի», 1983, թիվ 3, էջ 58-62:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 61:

կից, բերված օրինակներն էլ բավական են չհամաձայնելու հայ վաճառականության մասին Գ. Չարբհանալյանի, Գ. Լևոնյանի ու Աշ. Հովհաննիսյանի այն գնահատականներին, թե գիրքը նրանց համար լոկ վաճառքի ենթակա ապրանք էր, որից կարելի էր մեծ եկամուտ ակնկալել, և թե վաճառական դասը զուրկ էր ազգային արժանապատվության զգացումից:

Փաստորեն գրքերի տպագրությունը նյութական բավականին մեծ միջոցներ պահանջող բարդ ու տքնաջան աշխատանք էր: Եվ գրքեր տպագրվում էին ոչ անպայման նյութական շահի ակնկալիքով: Իհարկե, այսպանելի չէ, եթե գրքերի տպագրության գործում մեծ դեր խաղացած լինի նաև «վաճառական գնորդներ ունենալու հեռանկարը»<sup>29</sup>:

Այսպիսով, հայ վաճառականությունն իր ուրույն և անփոխարինելի տեղն ունի հայ գրատպության պատմության մեջ<sup>30</sup>, ու պիտի համաձայնենք այն մտքի հետ, «եթե չլիներ հայ վաճառականության դրամական օժանդակությունը, 16-17-րդ դարերի հայերեն տպագրված գրքերի կեսից շատ ավելին աշխարհ եկած չէր լինի»<sup>31</sup>: Այս երևույթն առավել արժևորվում է, երբ դրան գումարվում է նաև տպարանների ստեղծման նպատակը: Իսկ տպարանները հիմնադրվում էին «ի շահ և ի բարօրություն հայոց ազգի» որևէ բան անելու անուրանալի, վեհ ու գեղեցիկ նպատակով:

**А. А. АГАХАНЫЯН — *Попытка переоценки роли армянского купечества в развитии армянского книгопечатания.*** — В статье сделана попытка рассмотреть роль купечества в создании и деятельности армяноязычных типографий в 17-19 вв. Автором представлена деятельность пятерых армянских купцов, владельцев типографий: А. Геличенца (17 в.), ходжи Гаспара (17 в.), ходжи Нагапета (17 в.), Г. Халдарянца (18 в.) и Ц. Агаваляна (19 в.). Делается вывод о том, что создавая на свои средства типографии, представители купечества преследовали цель сделать науку и знания доступными армянскому народу.

<sup>29</sup> Ռ. Իշխանյան, Նոր գրական հայերենը 17-18-րդ դդ., Եր., 1979, էջ 72:

<sup>30</sup> Ի դեպ, հայ վաճառականների գործունեությունը չի սահմանափակվում միայն հայալեզու տպարանների հիմնադրմամբ: Նրանց միջնորդությամբ դեռևս 1564 թ. ռուս առաջին տպագրիչ Իվան Ֆեոդորովը ծանոթանում է Հակոբ Մեղապարտի գրքերին և հիմնադրում ռուսաստանյան տպագրությունը: Այդ մասին տե՛ս, օրինակ, «Советская культура», 1963, № 41:

<sup>31</sup> Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, հ. 1, էջ 118: